

discrepancy takes place in Quantum Electrodynamics, in Dirac's equation Dirac-Volkov solutions, which does not correspond to the classical particle at initial time instant. The correct solutions are given below for both classical and quantum cases.

## РЕЛЯТИВИСТСКАЯ ЗАРЯЖЕННАЯ ЧАСТИЦА В СКРЕПЕННЫХ ЭЛЕКТРОМАГНИТНЫХ ПОЛЯХ: КЛАССИЧЕСКИЙ И КВАНТОВЫЙ ПОДХОДЫ

С. Г. Амирханян,  
В. В. Мусаханян,  
К. С. Егизарян

Предыдущие решения релятивистского уравнения Лоренца, хорошо известные в литературе, являются нефизическими, так как сдвиг вектора-потенциала на постоянное значение изменяет значение начального импульса частицы. Такое же несоответствие имеется и в Квантовой Электродинамике в решении Волкова-Дирака, которое не соответствует классической частице в начальный момент времени. Корректные решения приведены ниже как для классического, так и квантового случаев.

## ՄՈՆԻՏՈՐՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՂԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Շ. Գ. ԲԱԴՈՅՅԱՆ  
ԻՐՏ ամբիոնի լաբորատոր

Աշխատանքը նվիրված է մոնիտորների ամենատարածված տիպերի (Էլեկտրոնաճառագայթային խողովակով, հեղուկրյուրեղային և պլազմային) կառուցվածքային և ֆունկցիոնալ համեմատական վերլուծության հարցերին: Նախ ասենք, որ նշված տիպի մոնիտորները ունեն կառուցվածքային և գործառության մի շարք առանձնահատկություններ, որոնց ինացությունը և համեմատական վերլուծությունը հնարավորություն կտա ծիշտ կողմնորոշվել այդ սարքերի ընտրության ժամանակ:

1. Էլեկտրոնաճառագայթային խողովակով մոնիտորներ - այստեղ օգտագործվում են էլեկտրոնաճառագայթային ապարատներ, որոնք նախատեսված են էլեկտրական ազդանշաններով ներկայացված ինֆորմացիան ձևափոխելու համար: Այստեղ կատարվում է էլեկտրոնների կողմնորոշված փնջի ինտենսիվության նեկավարում: Այս ապարատների լավագույն օրինակ է հանդիսանում կինետիկական, որը էլեկտրական ազդանշանները վերափոխում է լուսայինի: Ապարատի անվանումը առաջացել է «կինետիկա» բառից, որը կապված է էկրանի վրա շարժական պատկերների ստացման հետ: Ապարատի հիմնական մասերն են՝

• էլեկտրոնաճառագայթային ատրճանակը, որը նախատեսված է էլեկտրոնային ճառագայթը ձևափոխելու համար: Նրա օգնությամբ ստանում են անհրա-

ժեշտ կինետիկ էներգիայով և անհրաժեշտ կոնֆիգուրացիայով էլեկտրոնների փունջ:

● Էկրանը, որը ծածկված է յումինաֆոր կոչվող նյութով և բոցավառվում է, երբ նրա վրա ընկնում է էլեկտրոնային ճառագայթը:

● Խոտորման համակարգը, որի միջոցով լուսը ձևավորում է անհրաժեշտ պատկերը:

Այսպիսի մոնիթորներում կարևոր է կառի փոփոխման հաճախականությունը, որից էլ կախված է պատկերի հստակությունը [1]:

2. Հեղուկրյուրեղային մոնիթորները կազմված են հեղուկրյուրեղային հիմքով էկրանից: Այս էկրանները օգտագործվում են համակարգիչների, հեռուստացույցների, հեռախոսների, էլեկտրոնային գրքերի, թվային ապարատների և այլ էլեկտրոնային սարքերում գրաֆիկական պատկերների ստացման համար: Հեղուկրյուրեղային էկրանների կարևորագույն բնութագրիչներն են.

● Բույլտպությունը – պիկսելներով արտահայտված հորիզոնական և ուղղահայց չափերը,

● պիկսելի չափը – հարևան պիկսելների միջև հեռավորությունները,

● Էկրանի չափսերը (լայնության և երկարության հարաբերությունը),

● տեսանելի անկյունագիծը – վահանակի չափն ըստ անկյունագծի: Էկրանի չափսը կախված է նաև ֆորմատից, օրինակ՝ 4:3 ֆորմատով մոնիթորն ունի ավելի մեծ մակերես, քան 16:9 ֆորմատի մոնիթորը միևնույն անկյունագծի դեպքում,

● հակադրությունը - ամենապայծառ և ամենախավար կետերի հարաբերությունը,

● պայծառությունը,

● պատասխանի ժամանակը - պիկսելի պայծառության փոփոխության ամենակարծ ժամանակը,

● տեսադաշտի անկյունը - տրված անկյան դեպքում նախատեսված հակադրության անկյունը,

● մատրիցայի տեսակը - տեխնոլոգիան, ըստ որի պատրաստված է հեղուկրյուրեղային էկրանը:

Հեղուկրյուրեղային էկրանների արտադրության մեջ հիմնականում օգտագործվում են TN+film, IPS և MVA տեխնոլոգիաները: TN+film-ը ամենապարզ տեխնոլոգիան է: Անվան մեջ մտնող film-ը նշանակում է տեսադաշտի անկյան մեծացման համար կիրառված լրացուցիչ շերտ: Նման մատրիցաները հաճախ անվանում են ուղղակի TN :

Հեղուկրյուրեղային մատրիցայի յուրաքանչյուր պիկսել կազմված է երկու թափանցիկ էլեկտրոնների միջև գտնվող մոլեկուլների շերտից և երկու թևեռացած ֆիլտրներից, որոնց թևեռացման հարթությունները ուղղահայց են: Հեղուկրյուրեղայի թափանցիկ պատճենը առաջին ֆիլտրից անցնող լուսը համարյա ամբողջությամբ արգելափակվում է երկրորդում: Էլեկտրոնների մակերևույթը, որը շփվում է հեղուկրյուրեղի հետ, հատուկ մշակված է մոլեկուլին՝ նախապես մեկ ուղղությամբ կողմնորոշելու համար: TN մատրիցաներում այդ ուղղությունները փոխադարձ ուղղահայց են, այդ պատճենով էլ լարվածության թափանցիկ պատճենը առաջանակած դեպքում մոլեկուլները շարվում են պտուտակածն: Այդ

կառուցվածքը լույսը բեկում է այնպես, որ մինչև երկրորդ ֆիլտրին հասնելը թևոայնությունը փոփոխվում է, և նրա միջով լույսն անցնում է առանց կորուստի: Կախված պտույտի անկյունից, բյուրեղներով անցնում է շատ կամ քիչ լույս, որի արդյունքում յուրաքանչյուր պիկսելը տալիս է որոշակի չափով կարմիր, կանաչ և կապույտ գույն:

3. *Պլազմային վահանակը* գազալցված բնիկների մատրիցա է՝ երկու գուգահեռ ապակյա մակերեսների միջև: Գազային միջավայրի համար սովորաբար օգտագործվում է նեռն կամ քսենոն: Լիցքաբափումը գազի մեջ ընթանում է էկրանի երեսային մասի թափանցիկ էլեկտրոդի և ետկողմյան մասով անցնող հասցեագրված էլեկտրոդների միջև: Գազային լիցքաբափումն առաջացնում է ուլտրամանուշակագույն ճառագայթում, որն էլ խթանում է յուրմինաֆորի լուսարձակմանը: Գունավոր վահանակներում յուրաքանչյուր պիկսել կազմված է իներտ գազ (քսենոն) և երկու էլեկտրոդ պարունակող երեք միկրոսկոպիկ շերտերից: Երբ էլեկտրոդներին բարձր լարվածություն է հաղորդվում, դրանց միջև հայտնվում է ուլտրամանուշակագույն լուսարձակող պլազմա: Լույսն ընկնում է յուրմինաֆորների վրա, որոնք էլ լուսարձակում են հիմնական գույները՝ կարմիր, կանաչ և կապույտ: Լուսավորված գույմն անցնում է էկրանի ապակու միջով և երևում:

Ելնելով մոնիտորների երեք հիմնական տեսակների կառուցվածքային առանձնահատկություններից, քննարկենք դրանց առավելություններն ու թերությունները:

Ի տարբերություն հեղուկբյուրեղային և պլազմային մոնիտորների, էլեկտրոնածառագայթային խողովակով մոնիտորներում պատկերը այնքան էլ պարզ չէ, որը հանգեցնում է աչքերի արագ հոգնածության: Դեղուկբյուրեղային մոնիտորները էլեկտրոնածառագայթային խողովակով մոնիտորների համեմատությամբ ապահովում են բարձր պայծառություն, բացի դրանց՝ նրանց պիկսելները չեն երերում, պատկերները կայուն են, որի շնորհիվ, նստելով էկրանին շատ մոտ, մեր աչքերը չեն հոգնում: Նրանք ունեն փոքր չափսեր և քաշ, ինչպես նաև չկա ճառագայթների կենտրոնացման դեֆեկտներ, մագնիսական դաշտերից բխող խանգարումներ, պատկերների երկրաչափության և հստակության հետ կապված խնդիրներ: Սակայն, մյուս կողմից էլ, հեղուկբյուրեղային մոնիտորներն ունեն որոշակի թերություններ, ինչպիսիք են՝ կա սև գույնի գերակշռություն, պատկերների հերթափոխի արագությունը ավելի փոքր է, քան էլեկտրոնածառագայթային խողովակով և պլազմային մոնիտորներում: Զանգվածային արտադրության մոնիտորները վատ են պաշտպանված վնասվածքներից, ինչպես նաև գոյություն ունի դեֆեկտավոր պիկսելների պրոբլեմը, որոնց առավելագույն քանակը կախված է էկրանի չափսերից: Ըստ այդմ առանձնացվում է հեղուկբյուրեղային մոնիտորների չորս դաս՝ ամենաքաղաքացիությունը դասը այն է, որը չի թույլատրում թերի պիկսելների առկայությունը: Ամենացածր դասը թույլատրում է 1մլն գործող պիկսելներից 262 թերի պիկսել:

Դեղուկբյուրեղային մոնիտորների պիկսելները քայլայվում են, չնայած քայլայման արագությունը, մնացած տեխնոլոգիաների հետ համեմատած, ամենափոքրն է: Նշենք նաև պատասխանի ժամանակի խնդիրը՝ բյուրեղների շրջադարձի տեխնոլոգիան ինքնին շատ դանդաղ է, որի արդյունքում հեղուկբյուրեղի վահանակները ֆիլմների դիտման համար այնքան էլ լավ չեն՝ պլազմային մոնիտոր-

Աերի հետ համեմատած: Սակայն պատասխանի ժամանակի պրոբլեմը սուր խնդիր էր մի քանի տարի առաջ, այսօր այն գրեթե լուծված է:

Պլազմային տեխնոլոգիան ունի որոշակի առավելություններ հեղուկբյուրեղային տեխնոլոգիաների նկատմամբ: Նախ պլազմային էկրանի յումինաֆորը ապահովում է պայծառ գույների ավելի լայն շրջանակ, իսկ էլեկտրոնածառագայթային խողովակով մոնիթորների հետ համեմատած պլազմային էկրանների գումային շրջանակը ավելի թույլ է, քանի որ էլեկտրոնածառագայթային խողովակով մոնիթորներում էլեկտրոնների էներգիան ավելի մեծ է, քան պլազմային վահանակներում ուլտրամանուշակագույն ճառագայթման էներգիան, հետևաբար էլեկտրոնածառագայթային խողովակով մոնիթորներում յումինաֆորի բրոցվառումը ավելի լուծեղ է: Յարկ է նշել, որ պլազմային էկրանները կարող են հասնել մեծ չափսերի՝ ունենալով նվազագույն հաստություն: Պլազմային վահանակների բնութագրիչ հատկություն է պիկսելների մեծ չափսերը: Գործնականում ինարավոր չէ պիկսելի չափսերը հասցնել 0.5նմ-ից փոքր չափսերի, որի պատճառով էլ 82սմ-ից փոքր անկյունագիծ ունեցող պլազմային էկրաններ գոյություն չունեն: Ինչ վերաբերում է նկարների որակին, ապա այստեղ ամեն ինչ այնքան էլ հարթ չէ: Խնդիրը կապված է պիկսելի բնույթի հետ: Ժամանակի ընթացքում տեղի է ունենում յումինաֆորի այրամաշում, այն ենթարկվում է քայլայման և դառնում պակաս էֆեկտիվ: Ինչ վերաբերվում է արժեքային ֆակտորին, ապա պլազմային էկրանները բավականին թանկ են: Պլազմային վահանակների դեպքում առկայժումից ամբողջովին խուսափել հնարավոր չէ, հատկապես՝ էկրանին մոտ նստած ժամանակ: Դա հանգեցնում է աշքերի խիստ հոգնածության: ճիշտ է՝ պատկերը էկրանի վրա մեծ է, սակայն անհրաժեշտ է նստել դրանից հեռու [2]:

Վերը կատարված համեմատական վերլուծության արդյունքները ներկայացված են աղյուսակ 1-ում:

#### Աղյուսակ 1

№	հայտանիշ	Էլեկտրոնածառագայթային խողովակով մոնիթորներ	հեղուկբյութեղային մոնիթորներ	պլազմային մոնիթորներ
1.	պայծառություն	լավ	շատ լավ	շատ լավ
2.	գունահաղորդման որակը	նկատելի է առկայծում	առկայծում չկա, բայց սև գույնը բավականին գերազանցում է	ավելի լավ, քան էլ. մոնիթորներում, սակայն նկատելի է առկայժում
3.	հակադրություն	բույլատրելի	բույլատրելի	իրաշափի
4.	պատկերների հերթափոխի արագությունը	մեծ	փոքր քան էլ. և պլազմային մոնիթորներում	մեծ
5.	ազդեցությունը տեսողության վրա	վաստ	ավելի լավ, քան էլ. և պլազմային մոնիթորները	վաստ
6.	պատասխանի ժամանակը	շատ կարճ	կարճ	ավելի երկար
7.	գինը	ցածր	ավելի բարձր քան էլ. մոնիթորներինը	ավելի բարձր քան էլ. մոնիթորներինը

Այսպիսով պատկերի որակի առունով առաջին տեղում են պլազմային մոնիթորները։ Ծովայում առավել լայն տարածում են գտել հեղուկբյութեղային մոնիթորները և, ինչպես տեսնում ենք, էլեկտրոնաճառագայթային խողովակով մոնիթորների դարաշրջանը փաստորեն հետևում է։

Կոնկրետ կիրառության մոնիթորների ընտրության ժամանակ կարելի է օգտագործել այսուսակ 1-ում բերված համեմատական վերլուծության արդյունքները։

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **И. Н. Гутлин,** Телевизионные игровые автоматы и тренажеры; Москва, “Радио и связь”, 1982.
2. **Н. А. Тюнина, А. В. Родина,** Современные мониторы; Москва, Солон-Пресс, 2007.

#### СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ ОСНОВНЫХ ВИДОВ МОНИТОРОВ

**III. Г. Багдоян**

Работа посвящена вопросам структурного и функционального сравнительного анализа самых распространенных типов мониторов (с электронно-лучевой трубкой, жидкокристалльный и плазменный). Сравнение по определенным заявкам представлено также в виде таблицы.

#### COMPARATIVE ANALYSIS OF THE GENERAL MODES OF MONITORS

**SH. G Baghdoyan**

This work is dealt with the issues of structural and functional comparative analysis of the general modes of monitors (cathode-ray tube, fluid-crystal and plasmatic). Comparison according to certain requests is introduced also in tabular form.

#### ՀԱՄԱԿԱՐԳՎԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌԱՋՄԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՊՄԱՆ ԶԵՎԵՐԸ

**Ս. Ա. ՀԱՅՐԱՊԵՅԱՆ**

Գորիսի պետական մամկավարժական համալսարանի  
բնագիտական ֆակուլտետի փոխուժեկան

Կրթության զարգացման ժամանակակից փուլում համակարգչայնացումը համարվում է ուսուցման գործընթացի ակտիվացման հեռանկարային միջոց։ Ժամանակակից աշխարհում տեղեկատվական տեխնոլոգիաները (ՏՏ) դառնում